БЕССМЕРТНЫЙ ПОЛК

ԱՆՄԱՀ ԳՈՒՆԴ

N 07

« 28 » մարտի 2025 թ.

Երևանի քաղաքապետ՝ պարոն Տիգրան Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան,

«Անմահ գունդ արտերկրում» պատմամշակութային հասարակական կազմակերպությունը նախատեսում է 2025 թվականի մայիսի 9-ին կազմակերպել Հայրենական մեծ պատերազմում մեր նախնիների՝ մեր պապերի ու հայրերի հաղթանակի 80-րդ հոբելյանական տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառում՝ «Անմահ գնդի» քայլերթը դեպի «Հաղթանակ» զբոսայգի։

Քայլերթի մասնակիցները (6,000-8,000 մարդ) մայիսի 9-ին, ժամը 10:00-ին կհավաքվեն Երևանի Արաբկիր վարչական շրջանի Սբ. Խաչ եկեղեցու բակում, որտեղից ժամը 12:30-ին, «Անմահ գնդի» կազմում, հաղթանակած մասնակիցների լուսանկարները ձեռքներին, դրոշներով և պաստառներով, մոտավորապես հարյուր կարգադրիչի ուղեկցությամբ, Ազատության պողոտայով կշարժվեն դեպի «Հաղթանակ» զբոսայգի՝ մասնակցելու ժամը 13:00-ին անմար կրակի մոտ տեղի ունենալիք ծաղիկների և պսակների դրվագման հանդիսավոր արարողությանը։ Արարողությունից հետո կսկսվի եկեղեցական պատարագը։ Իսկ ժամը 13:30-ից մինչև 15:00 «Մայր Հայաստան» թանգարանի աստիճաններին հարող տարածքում կկայանա տոնական համերգ։

Այս գրությամբ մենք Ձեզ տեղեկացնում ենք «Անմահ գնդի» քայլերթի մասին և խնդրում ենք՝ ժամը 12:30-ից մինչև 13:00-ն դադարեցնել ավտոմեքենաների երթևեկությունը Ազատության պողոտայի մի ուղությամբ (Սբ. Խաչ եկեղեցուց մինչև Հաղթանակի զբոսայգու գլխավոր մուտք) և ապահովել երթի և համերգային ծրագրի մասնակիցների անվտանգությունը Երևան քաղաքի ոստիկանության և «Շտապ օգնության» ծառայության միջոցով։

Գրությանը կից ներկայացնում ենք «Անմահ գունդը արտերկրում» պատմամշակութային հասարակական կազմակերպության ժողովի որոշումը։

Հարգանքով,

«Անմահ Գունդը արտերկրում» պատմամշակութային հասարակական կազմակերպության

Գործադիր տնօրեն՝

Է.Ռ. Հովհաննիսյան _____